ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 37-Ա

«22» մայիսի 2018 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում Հայաաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով.

ո ր ո շ ու մ եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված թիվ 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը ՝ համաձայն հավելված թիվ 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

3) մինչև սույն թվականի մայիսի 30-ը մշակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

4) մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Արտավազդ Ղուկասյանը՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«22» մայիսի 2018 թվական
գյուղ Ամասիա

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի
2018 թվականի մայիս 22-ի N 37 որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյան / Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Արտավազդ Ղուկասյան / Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար՝ Սամվել Էգնատոսյան / Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝
   1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ՝ Արտեմ Դավթյան,
   2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ՝ Արա Հարությունյան,
   3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ՝ Ալեքսան Քոչոյան,
   4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն բնակավայրի վարչական ղեկավար Արարատ Առաքելյան
   5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնակատար Արտավազդ Ղուկասյան
   6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրի վարչական ղեկավար Աշոտ Պողոսյան
   7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրի վարչական ղեկավար Գևորիկ Հովակյան
   8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Էգնատոսյան
   9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի վարչական ղեկավար Սեյրան Սարգսյան
   10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրի վարչական ղեկավար Վահրամ Սաղաթելյան
   11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայրի վարչական ղեկավար Նորայր Մկրտչյան
   12) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Հովիկ Կարապետյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Մխիթար Վարդանյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Վարդան Շաղոյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Սևակ Պապոյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Աննա Մկոյան,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Հայկանուշ Պետրոսյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Արթուր Մկրտումյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Գարեգին Թորոսյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Սարգիս Յավրումյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Գարեգին Ղազարյան:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի
2018 թվականի մայիս 22-ի N 37 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌԿ պլանում:

2. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի զարգացման ծրագրում,

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

3. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին: